



Ով է հաշվարկելու և փոխանցելու Ձեր կուտակային վճարները:

Եթե Դուք աշխատում եք կամ ստանում եք պայմանագրային եկամուտ,

- ապա կուտակային վճարների հաշվարկման և փոխանցման պարտականությունը դրված է Ձեր գործատուի վրա:

Եթե Դուք անհատ ձեռնարկատեր եք կամ նոտար,

- ապա յուրաքանչյուր տարի Դուք ինքնուրույն եք իրականացնում կուտակային վճարների հաշվարկումը և փոխանցումը:

Եթե ունեք բողոք կամ հարցում՝ կապված կենսաթոշակային հաշվի կամ նպատակային սոցիալական վճարի հետ, ապա կարող եք դիմել հարկային մարմին:

Եթե ունեք գույքային պահանջ ֆոնդի կառավարչի, բանկի կամ ապահովագրական կազմակերպության նկատմամբ, ապա անկախ հարկային մարմնին դիմելու հանգամանքից, Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Եթե Դուք միացել եք կամավոր կենսաթոշակային բաղադրիչին, ապա՝

- Ձեր կուտակումների չափը և վճարման ձևերը սահմանվում են պայմանագրային հիմունքներով,
- պետությունը կուտակային վճար չի կատարում Ձեր հաշվին:

Կուտակային վճարները փոխանցվում են բանկերի, կամ ապահովագրական ընկերությունների, կամ ներդրումային ֆոնդի կառավարիչների մոտ բացված անհատական հաշվին:

Այս շարքից.



Իմացիր ավելին...

www.ePension.am



«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամ

Հասցե՝ Երևան, 0069, Կարապետ Ուլունցի 68

060 50 74 00
060 50 87 00

ePension@ePension.am



Այս տեղեկատվական թերթիկը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջոցով: Բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԿՆԻԿ

«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամ



»» ԽՆԱՅՈՒՄ ԵՆՔ ԲԱՐԵԿԵՃԻԿ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՁԵՎԱԿՈՐԿՈՒՄ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐԸ



www.ePension.am

3

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ

2014 թվականի հուլիսի 1-ից մեկնարկել է

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

**Եթե Դուք ծնվել եք 1974 թվականին կամ դրանից հետո
և վարձու աշխատող եք, նուտար կամ անհատ
ձեռնարկատեր, ապա 2014 թվականի հուլիսի 1-ից
Դուք ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ համակարգի
մասնակից եք:**

**Դուք յուրաքանչյուր ամիս Ձեր անվանական
աշխատավարձից (դեռևս չհարկված) կատարելու եք
նպատակային սոցիալական վճար, որը կրկնապատկվելու է
պետական բյուջեի հաշվին և կուտակվելու է
կենսաթոշակային ֆոնդում: Այն փայի տեսքով հաշվառվում է
Ձեր անհատական կենսաթոշակային հաշվում:**

Կենսաթոշակային հաշիվը նման է Ձեր բանկային հաշվին, սակայն
այս դեպքում Դուք չեք կարող ազատ տնօրինել Ձեր հաշվում եղած
միջոցները: Այն նույնպես Ձեր անհատական հաշիվն է, որը տեղե-
կություններ է պարունակում Ձեր օգտին կատարված կուտակային
վճարների, Ձեր օգտին ձեռք բերված փայերի քանակի և դրանց ար-
ժեքի մասին: Հաշվում եղած Ձեր միջոցները Դուք կարող եք տնօրի-
նել կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո:

**Սոցիալական վճարը հաշվարկվում է Ձեր՝
դեռևս չհարկված աշխատավարձից:**

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

**Եթե Դուք աշխատում եք, և Ձեր աշխատավարձը չի գերազանցում
ամսական 500.000 դրամը, ապա յուրաքանչյուր ամիս՝**

- Դուք կուտակում եք Ձեր աշխատավարձի 5%-ի չափով,
- պետությունը նույնպես Ձեզ համար Ձեր աշխատավարձի 5%-ի չա-
փով գումար է փոխանցում Ձեր կենսաթոշակային հաշվին:

Օրինակ՝

*Եթե Ձեր անվանական աշխատավարձը կազմում է ամսական
120.000 դրամ, ապա Դուք կուտակում եք 6000 դրամ: Պետությունը
նույնպես Ձեր անհատական կենսաթոշակային հաշվին փոխանցում
է 6000 դրամ: Արդյունքում՝ Ձեր անհատական կենսաթոշակային
հաշվում յուրաքանչյուր ամիս կուտակվում է 12.000 դրամ:*

**Օրենքով սահմանվում է ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ
ՕԲՅԵԿՏԻ ԱՌՎԿԵԼԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ՇԵՄ՝ մինչև 2020
թվականը ամսական 500.000 դրամ, սկսած 2020 թվականից՝
նվազագույն աշխատավարձի՝ հաշվետու ամսվա համար
սահմանված չափի 15-ապատիկը:**

**Եթե Դուք աշխատում եք, և Ձեր աշխատավարձը գերազանցում է ամսա-
կան 500.000 դրամը, ապա յուրաքանչյուր ամիս կատարում եք սոցիալա-
կան վճար 25.000 դրամ ևս այդքան Ձեր օգտին փոխանցում է պետու-
թյունը:**

Սկսած 2020 թվականի հուլիսի 1-ից, եթե աշխատավարձի չափը գերա-
զանցում է 500.000 դրամը, ապա Ձեր կողմից վճարվող սոցիալական վճա-
րի չափը հաշվարկվում է աշխատավարձի 10 տոկոսի և 25 000 դրամի
տարբերության չափով:

**Եթե Դուք անհատ ձեռնարկատեր կամ նուտար եք, և Ձեր եկամուտը
տարեկան չի գերազանցում 6.000.000 դրամը, ապա տարեկան՝**

- Դուք կուտակում եք Ձեր եկամտի 5%-ի չափով,
- պետությունը նույնպես Ձեզ համար Ձեր եկամտի 5%-ի չափով
գումար է փոխանցում Ձեր կենսաթոշակային հաշվին:

Օրինակ՝

*Եթե Ձեր եկամուտը կազմում է տարեկան 5.500.000 դրամ, ապա Դուք
կուտակում եք 275.000 դրամ: Պետությունը նույնպես Ձեր անհատա-
կան կենսաթոշակային հաշվին փոխանցում է 275.000 դրամ: Ար-
դյունքում՝ Ձեր անհատական կենսաթոշակային հաշվում կուտակ-
վում է 550.000 դրամ:*

**Օրենքով սահմանվում է ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ
ՕԲՅԵԿՏԻ ԱՌՎԿԵԼԱԳՈՒՅՆ ՏԱՐԵԿԱՆ ՇԵՄ՝ մինչև 2020 թվա-
կանը տարեկան 6.000.000 դրամ, սկսած 2020 թվականից՝
նվազագույն աշխատավարձի՝ հաշվետու տարվա հուն-
վարի 1-ի դրությամբ սահմանված չափի 180-ապատիկը:**

**Եթե Դուք անհատ ձեռնարկատեր կամ նուտար եք, և Ձեր եկամուտը
տարեկան գերազանցում է 6.000.000 դրամը, ապա Դուք տարեկան
կտրվածքով կատարում եք սոցիալական վճար 300.000 դրամ, ևս
այդքան Ձեր օգտին փոխանցում է պետությունը:**

Սկսած 2020 թվականի հուլիսի 1-ից, եթե եկամտի չափը գերազանցում
է 6.000.000 դրամը, ապա Ձեր կողմից վճարվող սոցիալական վճարի
չափը հաշվարկվում է տարեկան եկամտի 10 տոկոսի և 300.000 դրամի
տարբերության չափով:

**Եթե Դուք չեք աշխատում, ապա այդ ժամանակահատվածում չեք կա-
տարում կուտակային վճարներ: Հետագայում, երբ Դուք նորից աշխա-
տանքի անցնեք և կրկին ստանաք աշխատավարձ, կվերսկսեք կատարել
նպատակային սոցիալական վճարներ:**